«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Միջազգայնացումը բարձրագույն կրթության մեջ այլևս ընտրություն չէ, այլ՝ անհրաժեշտություն: Դա այն ուղին է, որը տանում է դեպի որակ, արդիականություն և համաշխարհային ներգրավվածություն»

Ջեյն Նայթ

Նախագիծ
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի
գիտական խորհրդի 2025թ. ---------- թիվ --------- նիստում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգը զարգանում է գլոբալացվող աշխարհում, որտեղ համագործակցությունն ու գիտելիքի փոխանակումը դարձել են կրթության որակի, արդյունավետության և մրցունակության բարձրացման անբաժան մաս: Այս համատեքստում միջազգայնացումը վերածվել է ռազմավարական առաջնահերթության՝ իբրև խթան կրթության, գիտության և մշակույթի զարգացման համար:

Սպորտը և ֆիզիկական կուլտուրան հանդիսանում են ոչ միայն առողջ կենսակերպի և անձնային զարգացման կարևոր բաղադրիչներ, այլ նաև՝ միջմշակութային երկխոսության, խաղաղության և համերաշխության հզոր միջոց:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ հիմնադրամը, այսուհետ՝ Ինստիտուտ, ունենալով տարիների փորձառություն սպորտի, ֆիզիկական դաստիարակության և առողջ կենսակերպի ոլորտներում, կարևորում է միջազգային համագործակցությունը՝ որպես որակյալ կրթության, առաջադեմ գիտական հետազոտությունների և ինստիտուցիոնալ կայունության հիմնասյուն: Սույն քաղաքականությունը կոչված է համակարգելու և ուղղորդելու Ինստիտուտի միջազգային գործունեությունը՝ կրթական, գիտական և սպորտային ոլորտներում՝ ստեղծելով ինստիտուցիոնալ միջավայր, որը խթանում է շարժունություն, ճանաչելիություն և փոխշահավետ գործընկերություն:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն քաղաքականությունը մշակվել է համաձայն՝

- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի
- ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության
- ՀՖԿՍՊԻ-ի 2022-26թթ Ռազմավարական ծրագրի
- «Էրազմուս+ SIN-NEC» ծրագրի շրջանակներում մշակված բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման ինքնագնահատման վերլուծության

1.1. Սույն քաղաքականությունը սահմանում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) միջազգայնացման ռազմավարական նպատակները, ուղղությունները, սկզբունքները և իրագործման գործիքակազմը:

1.2. Քաղաքականության միտված է նպաստել Ինստիտուտի միջազգային ճանաչելիության բարձրացմանը, միջազգային չափանիշներին համահունչ կրթության և գիտության որակի բարելավմանը, ուսանողների և աշխատակազմի ինտեգրմանը համաշխարհային ակադեմիական միջավայրին:

II. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Խթանել Ինստիտուտի միջազգային ակադեմիական և գիտական համագործակցությունը:
- Զարգացնել կրթական ծրագրերի միջազգայնացման գործընթացը, հատկապես՝ համատեղ անգլալեզու ծրագրերի ներդրման միջոցով:
- Ապահովել ուսանողների և աշխատակազմի շարժունության աճը:
- Աջակցել Ինստիտուտում իրականացվող գիտական աշխատանքների և հետազոտական ծրագրերի միջազգայնացմանը:

- Բարելավել Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունները միջազգայնացման ոլորտում:
- Բարձրացնել Ինստիտուտի միջազգային ճանաչելիության մակարդակը:

III. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Միջազգային համագործակցություն և գործընկերություն

- Փոխըմբռնման հուշագրերի (MoU) կնքում արտերկրի բուհերի, կրթական և գիտական կառույցների հետ:
- Անդամակցություն միջազգային ակադեմիական ցանցերին:

3.2. Ուսումնական ծրագրերի միջազգայնացում

- Անգլալեզու կրթական ծրագրերի մշակում և ներդրում:
- Համատեղ/կրկնակի դիպլոմների հնարավորության գործարկում:
- Ամառային դպրոցների իրականացում:

3.3. Ուսանողության և աշխատակազմի շարժունություն

- Erasmus+ և այլ փոխանակման ծրագրերի ակտիվացում:
- Ֆինանսական, կազմակերպչական և խորհրդատվական աջակցություն շարժունության ծրագրերին:

3.4. Գիտական համագործակցություն

- Համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում:
- Միջազգային գիտաժողովների կազմակերպում:
- Միջազգային գիտաժողովներին մասնակցության ակտիվացում:

3.5. Միջազգային դիրքավորում և տեղեկատվություն

- Բազմալեզու տեղեկատվական համակարգի զարգացում:
- Միջազգային կրթական հարթակներին և ցուցահանդեսներին մասնակցութան ակտիվացում:

3.6. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

- Ինստիտուտի Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի գործառույթների ընդլայնում:
- Որակի ապահովման համակարգի համապատասխանեցում միջազգային (եվրոպական) ստանդարտներին:

IV. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

4.1. Ինստիտուտը մշակում և հաստատում է տարեկան գործողությունների պլան՝ հիմք ընդունելով սույն քաղաքականության դրույթները:

4.2. Միջազգայնացման քաղաքականության իրականացումը գնահատվում է չափելի ցուցիչներով, ներառյալ՝

- Գործընկեր բուհերի և կազմակերպությունների քանակի ավելացում
- Միջազգային շարժունության մասնակիցների քանակի ավելացում
- Միջազգային հրապարակումների և գիտաժողովների ցուցանիշների աճ
- Միջազգային ծրագրերում ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացում:

4.3. Քաղաքականության իրականացումը, վերահսկումն ու գնահատումը ապահովում Ինստիտուտի արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորը՝ ՄՀԶԾ բաժնի ներգրավմամբ:

V. ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն քաղաքականությունը ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի հաստատման պահից:

5.2. Սույն քաղաքականության մեջ կատարվող փոփոխությունները և լրացումները ենթակա են հաստատման Գիտական խորհրդի կողմից: